ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓԱՍԻԱՆՍ-2006

Անցյալ ուրբաթ օրը գիտության մի քանի դոկտորներ, որոնց թեկնածությունն առաջադրված էր Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամների ընտրություններում, քանկեռ են կազմակերպել եւ տանել են իրենց շրջանավելը:

Իսկ տոնել են միայն այն պատճառով, որ դեկտեմբերի 14-ին եւ 15-ին ակադեմիայում տեղի ունեցած ԳԱԱ թղթակից անդամների խայտառակ ընտրությունների արդյունքում իրենց անունները չեն հայտնվել նրանց անունների կողքին, ովքեր ընտրվել են: Ընտրությունները, իհարկե, խայտառակ էին հիմնականում ԳԱԱ բոլոր բաժանմունքներում, սակայն առավել ուշագրավ են Ֆիզիկայի բաժանմունքի ընտրությունները, որոնք կայանում էին անձամբ ԳԱԱ Նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի դիրիժորությամբ: Եւ ուրեմն, ի՞նչ է տեղի ունեցել սույն բաժանմունքում, որտեղ ընտրություններին մասնակցում էր անձամբ մասնագիտությամբ Ֆիզիկ ԳԱԱ Նախագահը: Ֆիզիկայի բնագավառին 5 մասնագիտությունների գծով հատկացված էր 7 տեղ, որոնցից մեկը՝ մինչեւ 51 տարեկան երիտասարդ Ֆիզիկոսի համար: Իսկ մնացած մասնագիտությունների համար իջեցված էին մեկական տեղեր, բացառությամբ «լազերային Ֆիզիկա» մասնագիտության: Այս մասնագիտությանը հատկացված էր 2 տեղ ոչ թե այն պատճառով, որ սույն մասնագիտությամբ Ֆիզիկոսներ հանրապետությունում շատ կան, այլ այն, որ այստեղ կար Ֆիզիկոսների հանրության կողմից անվերապահորեն ընդունված առաջատար թեկնածու՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ Համլետ Ավետիսյանը, իսկ ԳԱԱ Նախագահը նույն մասնագիտությամբ ուներ թեկնածու՝ Գագիկ Կրյուկչյանին: Կրյուկչյանը, որը Ռաֆիկ Մարտիրոսովիչի ընտանիքի բարեկամն է, աշխատում էր ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում, այնուհետեւ՝ ԵՊՀ-ում, երբ Մարտիրոսովիչն այնտեղ ռեկտոր էր: Այս կազմակերպություններում առաջադրումներին մասնակցելուց հետո Կրյուկչյանը, չկարողանալով հավաքել անհրաժեշտ ձայների քանակ, դուրս է մնում: Այսինքն, նրա թեկնածությունը չի առաջադրվում: ԳԱԱ Նախագահը, որը նաեւ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենն էր, իսկ այժմ՝ տնօրենի խորհրդականը, Կրյուկչյանի թեկնածությունն առաջադրում է այս ինստիտուտի գիտխորհրդով: Արդեն բաժանմունքում տեղի ունեցած ընտրության ժամանակ ԳԱԱ Նախագահը կազմում է 6 հոգանոց մի բլոկ՝ Ռ. Մարտիրոսյան, Ա. Մկրտչյան, Է. Զուբարյան, Է. Խաչիկյան, Հ. Վարդապետյան, Ա. Գուլյան, որն ի վիճակի էր տապալել ցանկացած հավակնորդի: Հիշեցնենք, որ ընտրողների քանակն այս բաժանմունքում 15 էր, իսկ անցողիկ միավորը 10-ն էր: Երբ բաժանմունքի ընտրությունից հետո բացվել է քվեատուփը, պարզվել է, որ մինչ բաժանմունքի ընտրությունները փորձագիտական հանձնաժողովի կողմից անցկացրած բաց քվեարկության արդյունքում ցուցակի 1-ին եւ 2-րդ տեղերում գտնվող ոչ մի հավակնորդ չի հաղթել: Լազերային Ֆիզիկա մասնագիտությամբ ԳԱԱ Նախագահը հետեւողականորեն անցկացրել է իր բարեկամ Կրյուկչյանին՝ ոտնակոխ անելով անգամ Ֆիզիկոսների շրջանում հայտնի գիտնական Համլետ Ավետիսյանին: Սույն բաժանմունքի ակադեմիկոսներ Համլետ Վարդապետյանն ու Ռաֆայել Ղազարյանը հանդիմել են իրենց բոլոր կոլեգա ակադեմիկոսներին՝ նրանց խոստանալով իրենց ձայնը, եւ այդ կերպ նրանց հաջողվել է իրենց սաների՝ Ալբերտ Միրունյանի եւ Արթուր Իշխանյանի համար հավաքել ձայների ֆանտաստիկ քանակ: Ֆանտաստիկ, քանի որ սույն բաժանմունքի անդամների ճնշող մեծամասնությունը, իրենց ասելով, առաջին անգամ էր տեսնում եւ լսում այդ մարդկանց անունները: Մյուս թեկնածուն՝ Համլետ Կարայանը, որի վերջին տարիների գիտական աշխատանքների ցուցակում հիմնականում կոնֆերանսների թեզիսներ են, ԳԱԱ թղթակից անդամ է ընտրվել միայն այն պատճառով, որ նրա համար, ըստ խիստ հավաստի աղբյուրների, բարեխոսել է անգամ Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը: Բայց, բացի քաղաքապետարանի ընդգծված աջակցությունից, Կարայանը ունեցել է նաեւ Ֆինանսների նախարարության աջակցությունը: Հաջորդ թեկնածուն՝ Ռոլանդ Ավագյանը, որը դարձավ ԳԱԱ թղթակից անդամ, վերջին 15 տարում, ըստ ԳԱԱ աշխատակիցների, տպագրել է ընդամենը 4-5 գիտական հոդված, այն դեպքում, երբ տեսական Ֆիզիկոսի համար, ըստ մասնագետների, տարին գոնե 2 հոդված չունենալն ամոթ է: ԳԱԱ թղթակից անդամ դարձած մյուս թեկնածուն՝ Ռաֆիկ Կոստանյանը, ըստ ակադեմիկոսների, անվերապահորեն վայելում էր վերոնշյալ վեցյակի սերը: Եւ միայն ԳԱԱ թղթակից անդամ դարձած Ալբերտ Կիրակոսյանը ոչ մի կերպ չի տեղավորվել «ակադեմիական փասիանս-2006»-ում: Բայց նա ընտրվել է միայն այն պատճառով, որ եթե նրան չընտրեին, այդ տեղը կորելու էր, այնպես, ինչպես կորան ինֆորմատիկայի եւ օրգանական քիմիայի համար հատկացված տեղերը: Փաստորեն, Ֆիզիկայի բնագավառում խաղացված «փասիանսի» ժամանակ ԳԱԱ Նախագահը որեւէ լուրջ եւ ճանաչում ունեցող գիտնականի թույլ չի տվել թղթակից անդամ դառնալ, քանի որ նա ուներ իր թեկնածուներին: Եւ դա էր պատճառը, որ որոշ ակադեմիկոսներ սույն ընտրություններից դուրս էին գալիս աղշահար եղած: Հիշեցնենք, որ հենց այդ օրը նրանցից ոմանք հայտարարեցին, որ անցան ամենաանարժանները: Այսօր ԳԱԱ-ում այն կարծիքին են, որ Ֆիզիկայի բնագավառում նման խայտառակ ընտրություններ ԳԱԱ պատմության մեջ չեն եղել: Այս ընտրությունները նրանք որակում են որպես ՀՀ-ում տեղի ունեցած ամենածանր կոռուպցիոն երեւույթը, քանի որ «սրբության սրբոց ակադեմիայում» նման բան թույլ տալ չէր կարելի: Ավելին, այս ընտրությունները, նրանց կարծիքով, բերելու են այլասերության եւ կլանային համակարգի:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ